

Թթւենու ՏՆԿԻՆԵՐԻ ԱՄՐՈՂ ԱճԵՑՄԱՆ ՔԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Թթւենին (*Morus L.*) թթազգիների ընտանիքից է: Թթւենու հատապտուղները պարունակում են մինչև 22% շաքարներ, բազմաթիվ վիտամիններ և այլ արժեքավոր նյութեր: Սննդարդյունաբերության մեջ հատապտուղները օգտագործվում են թարմ և չորացված վիճակում, պատրաստում են դոշաք, մուրարա, օղի, սալիրտ, գինի, իսկ տերևներն օգտագործվում են շերամապահության բնագավառում:

Թթւենին բազմանում է սերմերով, կտրոններով, պատվաստի և անդալիսի միջոցով: Մեր փորձերում թթւենու սերմերը ցանվել են գարնանը (ապրիլի վերջին տասնօրյակում), երբ լցանյութի ջերմաստիճանը եղել է 10°C -ի սահմաններում: Որպես լցանյութ օգտագործվել են հրաբխային սև խարամը և գլաքար+50% սև խարամի խառնուրդը:

Առաջին տարում հրաբխային սև խարամում սերմնաբույսերի ծառաչափական ցուցանիշները կազմել են բարձրությունը՝ 87սմ, ընդ տրամագիծը՝ 12մմ, իսկ գլաքար+50% սև խարամ լցանյութում 63սմ և 8մմ, հաճապատասխանաբար: Ստացված տնկիները պատվաստվել են աշնանը՝ տարբեր նպատակների (դեկորատիվ տնկարկնան և հատապտուղների ստացման) համար: Փորձերը շարունակվել են հրաբխային սև խարամ լցանյութում, որտեղ երկրորդ տարում ծառաչափական ցուցանիշները կազմել են շերամապահության համար՝ 195սմ և 27մմ, դեկորատիվ պատվաստի համար՝ 174սմ և 32մմ, հատապտուղների ստացման համար՝ 216սմ և 28մմ, հաճապատասխանաբար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հրաբխային սև խարամ լցանյութը 1m^2 -ից ապահովում է մինչև 45 տնկիների ել. շերամապահության համար՝ 41, դեկորատիվ պատվաստի՝ 37, հատապտուղների ստացման՝ 40 տնկի: Մինչեւ գլաքար+50% սև խարամ լցանյութի խառնուրդի դեպքում 1m^2 -ից կարելի է ստանալ ընդամենը 28-32 տնկի:

Այսպիսով, անհող մշակույթը հնարավիրություն է տալիս 2 տարում կազմակերպել թթւենու տնկիների արագացված արտադրություն: Ներկայումս ինստիտուտում առկա հիդրոպոնիկումների գործարկմամբ հնարավոր է երկու տարում արտադրել թթւենու մոտ 0,9-1,0 միլիոն տնկի, ինչը կապահովի հանրապետությունում արդեն մոռացված շերամապահության վերականգնումը և կիրանի բնական մետաքսի արտադրությունը: Առավել ևս, որ Արարատյան դաշտի բնակլիմայական պայմանները, այդ տեսակետից, խիստ բարենպաստ են:

Hovsepyan A.H., Eloyan S.A., Poghosyan G.Y.

OPPORTUNITY OF SOILLESS CULTIVATION OF MULBERRY SAPLINGS

Summary

Soilless cultivation gives an opportunity to organize some kind of accelerated production of mulberry plants. At present, by means of hydroponics of the Institute it's possible to produce approximately 0,9-1,0 billion plants of mulberry in two years, which will provide the republic with reconstruction of already forgotten seri-culture and will stimulate the production of natural silk, all the more as the conditions of the Ararat valley are strictly favourable.